ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 15
ՏԱՐԵԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ

Թաւրիզում	14 դրան
Գաւառներում	20 դրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան	4 ռբ. 50 կ.
Թուրքիա	50 դուրշ
Եւրոպա	12 ֆրանգ
Ամերիկա	2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Չորրորդ ,, ,, ,, 3 ,,

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ դրուղներից խնդրուած զրեն պարզ, մաքուր և անպակաս թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնն իրեն է վերապահում իրաւունք՝ ուղղուած յօդուածները վերախմբելու և կրճատումներով հրատարակելու։
3. Մենք մերժում ենք ,,,

բակութեան դրամների հաշիւներն արտագրելով թղթի վրայ, յանձնել ենք մամուլին, մի գաղափար տալու համար հասարակութեան իր դպրոցների նիւթականի մասին, որովհետև յաճախ լսումենք, որ ասումեն թէ «Արամեան» դպրոցը հարուստ է։ Մենք ուզեցինք ցոյց տալ որ—,այո՛, հարուստ է, բայց միայն թղթի վրայ, իսկ իրօք հարուստ կլինի, եթէ հասարակութիւնը կհետաքրքրուի և կաշխատի գանձել կորստի մատնուած դրամները։ Ցայտնում ենք հրապարակով, որ մենք թշնամիներ չունենք, գոնէ չենք ճանաչում (իսկ եթէ ուրիշները թշնամաբար են վերաբերում դէպի մեզ և որևէ հաշիւ ունեն մաքրելու մեզ հետ-մենք չգիտենք) հետևաբար և մաքրելու հաշիւներ էլ չունենք։ Իսկ եթէ ոմանք թերթում կարդում են իրենց անուն ազգանունը, որ դպրոցին փող են պարտ, այդտեղ մեղաւորը մենք չենք այլ իրենք և դպրոցի տեսարակները։ Մեղաւոր են իրենք, որ եթէ իրենք պարտչեն,ինչու՞ են վճարել. իսկ մեր դպրոցի տեսարակներն էլ մեղաւոր են նրանով, որ եթէ այդ պարտները պարտական չեն, ինչու՞ են իրենց թերթերում արձանագրած այդ անուններն և նրանց դիմաց նրանց պարտքի քանակութիւնը։ Իսկ թէ մենք իրաւունք ունէինք այդպէս վարուելու, թող դատեն անաչառ ընթերցողները։

(ՎԵՐՋ)

Տ-Կարեան.

«ՄՇԱԿԻ» 40 ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Տարաբախտաբար մեր տեղի օրուայ հարցերը այնքան հրատապ էին և մեր թերթը շաբաթը մի անգամ լոյս տեսնելով այնքան քիչ սիւնակներ էր ազատ թողնում, որ հնարաւորութիւն չէինք ունենում մեր շրջանից դուրս համազգային այլ, ըստ հնարաւորութեան, հարցերով ևս զբաղուելու։

Այդպիսի և այն էլ կարևոր ու խոշոր հարցէ մեր հայկական կեանքում պատկառելի դեր, անցեալ և ազդեցութիւն ունեցող «Մշակի» 40—ամեայ յոբելեանը, որի մասին հազիւ մեր «Միտք»-ի 11 համարի խմբագրականում հարևանցի մի մեծարանք կարողացել էինք անել։

Ներկայ տողերում առանձին հաճոյքով վերյիշում ենք այդ յոբելեանական հարցն այն պատճառով, որ այսօր (31 Մայիսի) ստացուած «Հանդէս Ամսօրեան»*) հայր Մենեվիշեանի հմտալից խմբագրականով առիթ է տուել մեզ նորէն արտայայտուելու այդ նշանակալից յոբելեանի մասին։

Այս վերջին ամիսները «Մշակի» 40—ամեայ յոբելեանի մասին շատ ու շատ գնահատական յօդուածներ գրուեցին։ Այդ առթիւ գրուած բոլոր յօդուածների մէջ ամենից յաջողը, համոզիչը և գեղեցիկ գնահատականներով լեցունը մենք համարում ենք մէկ հ. Մենեվիշեանի այս գրուածքը «Հանդէս Ամսօրեայ»-ի 6-րդ համարի սկզբում, որ կրում է «Մշակի» քառասնամեակը» վերնագիրը և մէկ էլ Շերէնցի իմաստալից յօդուածը «Մշակում։

Այս երկուսի յօդուածները տալիս են թէև համառօտ, բայց ամենաճշգրիտ բնորոշումներն ու դերը 40-ամեայ վաստակաւոր «Մշակ»-ի։ «Մշակ»-ի, որի յոբելեանական յանձնաժողովի կոչի մերժումը Հալլաբարցոց կողմից՝ առանձին բաւականութեամբ տպել է «Հորիզոնը», որի խմբագիրները ամենից աւելի երախտապարտ և ծնրադիր պէտք է լինէին «Մշակին» և նրա պատկառելի այս յոբելեանին։

Բայց մենք դառնանք «Հանդէս Ամսօրեայ»-ին։

Հանդիսի այդ լեղեցկօրէն հիւսած խմբագրականում ներհուն հ. Մենեվիշեանը ,,Մշակի՛՛-ի 40-ամեայ արդիւնաւէտ գործունէութեան ընդհանուր փաստերը տալուց յետոյ, շեշտում է.

Անհրաժեշտ է անկողմնակալ կերպով դատել զինքը և մեծ արժանիք մը չտալանալ իրեն՝ 30-40 տարիներ յառաջ՝ գոնէ հայ սրտերն ի մի ձուլելու ճիգն ու ջանքը, առաջին անգամ ,,Մշակ՛՛ գործնականապէս փորձեց։

Ապա երկար խօսելով «Մշակի» «գրչամարտերի» մասին՝ բազմահրամուտ և արդարամիտն հ. Մենեվիշեան՝ աւելացնում է.

Արժանի է, որ ազգը տօնէ այս յոբելեանը, որովհետև արժանի է «Մշակը» իւր յոբելեանական շնորհաւորութեանց։

Մենք ոչ մշակական ենք եղել և ոչ էլ նրա կոյր երկրպագուներից, այլ ընդհակառակը յաճախ, ըստ մեր, ապօրէն, ոչ շիտակ և հակա-ազատամտական ենք գտել նրա կարծիքն ու յարձակումը այս ու այն անհատի կամ հարցի վերաբերմամբ, այնուամենայնիւ, թէև ուշ, ողջունում ենք նրա յոբելեանը, որովհետև սայթաքել ամենքն են սայթաքում *) ուստի սայթաքած կարող է լինել և «Մշակը»։ Սակայն նոյն «Մշակը» իւր 40-ամեայ դժուարին և ընդհանուր գործունէութեան մէջ եղել է օգտակար, ազգաշէն, երախտագիտութեան և ծափահարութեան արժանի։

Արդեօք մի քաղաքավարի յանդիմանութիւն, կամ մի ցնցող ականջաքշուկ չհամարել՝ «Մշակի» անազնիւ հակառակորդ «Հորիզոնի» և «Մշակի» երբեմնի կաթոգին որդիք, իսկ այժմ խորթ ու արիւնարբու զաւակներ Խաժակ և ընկ.—թեան հասցէին Հ. Մենեվիշեանի այս իմաստալից խօսքերը.-

Ի սէր ազգային յառաջդիմութեան այլախոհներն **) ալ ազնուամիտ ***) շարժումով մը տօնեն այս գրական տօնը . . .

Կլսեն արդեօք այս խօսքերը կամաւոր խուլեր Հորիզոնականներն ու սօֆթայամիտ Ազատամարտականները։

*) Լէօն 12 և աւելի տարիներ կողք կողքի պ. Առաքելեանի հետ գործելուց և և նրան՝ Արծրունեան իր հատորներում գովելուց յետոյ, թքեց իւր անցեալի և գրածի վրայ և վերջը յայտարարեց, որ ինքը «մեղանչել է ճշմարտութեան դէմ։» Ուրիշ խօսքով Լէօն չամաչեց օրը ցերեկով ասել, որ ինքը կեղծել, ստել և տանջել է իւր խիղճը։

Նոյն Լէօն, որ ամեն գնով մեծ հայ և մեծ դիպլօմատ Օրմանեանին սևացնել էր ուզում, նորէն լռեցրեց իւր խիղճը առաւել համարձակ ստելու և կեղծելու համար։ Առանց այլ և այլութեան նա Օրմանեա՛ի յայտնի ճառի կէս՝ և իրեն ձեռնտու մասը մէջ բերելով՝ մոլորեցրեց ընթերցողներին, սակայն արծուի թռիչքով վրայ հասաւ քաջարան Ադոնցը, երևան բերեց Լէօյի՝ Օրմանեանի ճառի կրճատած | և զօրեղ մասը և անհերքելիօրէն ապացուցեց թէ Օրմանեանի մեծութիւնը և թէ Լէօյի անպարարութիւնը ու խիստ ստոր կեղծումները։ Եւ այնքան կոյր ու անազնիւ հակառակորդք Լէօ և ընկ. «Հորիզոնի» խմբագրականով շանթւոր են տեղում՝ թէ չարժէ տօնել «Մշակի» 40—ամեակը, որովհետև «Մշակը» մտքի պոռնիկ է»։ Եւ այս կեղծիքներն անողներն իրենց այնպէս են ցոյց տալիս, իբրև թէ իրենք չեն սայթաքել, իբրև թէ միշտ եղել են կօրրեկտ և անսխալական իբրև պապ . . .

**) Ընդգծումները մերն են

***) Նոյնպէս։

ԿԱՊՈՅՏԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ
(Տուրգենեւից)

—

Օ՜, կապոյտի թագաւորութիւն։ Օ՜, թագաւորութիւն կապոյտի, լոյսի, երիտասարդութեան և երջանկութեան։ Ես տեսայ քեզ... երազում։

Մենք մի քանի հոգի էինք գեղեցիկ, պաճուճուած նաւակում։ Սպիտակ առագաստը կարապային կրծքով ծառացել էր վառվռուն դրօշակների տակ։

Ես չը գիտէի ովքեր են իմ ընկերները, բայց ես իմ ամբողջ գոյութեամբ զգում էի, որ նրանք նոյնքան երիտասարդ, ուրախ և երջանիկ էին, որքան և ես։

Ես նրանց նոյնիսկ չէի նկատում։ Ես իմ ամբողջ գոյութեամբ զգում էի, որ նոքանք նոյնքան երիտասարդ, ուրախ և երջանիկ էին, որքան և ես։

Ես նրանց նոյն իսկ չէի նկատում։ Ես տեսնում էի շուրջս միայն անշարժ, կապոյտ ծովը, մեղմ ալեկոծուած արևի ոսկեգոյն ճառագայթների տակ, իսկ վերևը ձգուած էր նոյնպիսի անշարժ և նոյնպիսի կապոյտ մի ծով նրա վրայով մեծ շքով, կարծես ծիծաղելով սահում էր սիրալիր արևը։

Եւ մեր մէջ մերթ ընդ մերթ բաձրանում էր բարձր և ուրախ ծիծաղ, նման աստուածների ծիծաղին։

Բայց յանկարծ մէկի շրթներից դուրս թափուեցին բառեր, բանաստեղծութիւններ, լի սքանչելի գեղեցկութեամբ։ Կարծես երկինքն էլ իբր պատասխան հնչեց վերևից և ամբողջ ծովնէլ սերտ կարեկցութեամբ ցնցուեց չորս կողմից . . . իսկ այնտեղ կրկին տիրեց երանելի խաղաղութիւն։

Թեթև սահելով մեղմ ալիքներով, լողում էր մեր սրընթաց նաւակը։ Հողմը չէր, որ նրան առաջ էր շարժում։ Մեր սեպհական թռթռուն սրտերն էին նրան ղեկավարում։ Ուր ցանկանում էինք, այնտեղ և տարուում էր նա անձայն, ինչպէս շնչաւոր։

Մենք հանդիպում էինք կղզիների, կախարդական, կիսաթափանցիկ կղզիների, թանգագին քարերի, յակինթների և զմրուխտների շղարշով պարուրուած։ Զմայլիչ անուշահոտութիւններ գալիս էին շրջակայ ափերից։ Մի քանիսը այդ կղզիներից դրուագում էին մեզ սպիտակ ծաղիկների և շուշանների հեղեղով, միւսներից յանկարծակի բարձրանում էին ծիածանագոյն, երկար թևերով թռչուններ։

Նրանք պտոյտներ էին գործում մեր վերը, շուշանները և վարդերը ժպտում էին մեր նաւակի յղկած կողերով սահող մարգարտային փրփուրի մէջ։

Ծաղիկների և թռչունների հետ միասին հատնում էին մեզ քաղցր, քաղցր հընչիւններ... Նրանց միջից լսում էին կանացի ձայներ... Եւ ամեն ինչ, երկինքը, ծովը, առագաստի երերալը բարձրում, կոհակների խոխոջը նաւի յետևում-բոլորը խօսում էին սիրոյ, յաւէրժական սիրոյ մասին։

Եւ նա, որին մեզնից իւրաքանչիւրը սիրում էր-այս տեղ էր... անտեսանելի և մօտիկ։ Մի ակընթարթ ևս-և ահա կը փայլեն նրա աչքերը, կը ծաղկի նրա ժպիտը... Նրա ձեռքը կը վերցնի քո ձեռքը և կը տանէ քեզ իւր հետ յաւիտենական դրախտ։

Օ՜, կապոյտի թագաւորութիւն։ Ես տեսայ քեզ երազում։

թարգմ. Փայլակ։

ՄԻ ՔԱՆԻ ԷՋԵՐ ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

—

—Ինչ խայտառակ դրութիւն է, դպրոցում այլ ևս դրամ չկայ. նոյն իսկ ամառնային ռոճիկները, ինչպէս երևում է, դժուարութեամբ կստանանք,

—Տարուայ սկզբին ես չէի ասում, որ չարժէ այսուհետև «Հայկազեան—Թամարեան» դպրոցում պաշտօնավարել։ Իրօք լազաթն արդէն անցել է և նոյն իսկ գաղափարը նսեմացել։

—Ինձ թւում է կամաց—կամաց պէտք է մօտենալ Ղալացիներին։

—Արի՛, մի ներկայացում կազմակերպենք Ղալայի դպրոցի օգտին։

—Հապա՞ մեր համոզմունքները, այն «նեխուած մթնոլորդը, ոստիկան ուսուցիչները, յետադիմականները», չէ՞ որ այդ բոլորը մենք էինք ասողը։

—Մի յօդուածով «Մտքի» մէջ կքաւենք մեր այդ յանցանքները, պէտք է շոյել նոցա կրօնական համոզմունքները.

—Բայց չէ՞ որ մենք կրօն և եկեղեցի չենք ճանաչում։

—Ո՞վ ասաց որ չենք ճանաչում է, երբ ենք այդպիսի բան ասել է։ Եկեղեցում չենք մկրտուում, եկեղեցում չենք ամուսնանում, դագաղներս եկեղեցի չէ՞ դրուելու։

—Ինչպէ՞ս թէ եկեղեցի չենք ճանաչում, առանց կրօնի և Աստծոյ տան էլ բան կլինի՞, այդ դէպքում աշխարհը հիմնայատակ պէտք է անել ի՞նչ է.

—Բայց ի՞նչ կասէ հասարակութիւնը, վերջապէս մեր բանտարկուած ընկերները։

—Հասարակութիւնը իր փողը թող տայ և ապա ինչ ուզում է թող ասէ, իսկ մեր ընկերները երբէք դժգոհելու իրաւունք չունին։ Մենք էլ ենք քաւում մեր յանցանքը նրանք էլ, ըստ էութեան ոչ մի տարբերութիւն չկայ, դա միայն տակտիկայի խնդիր է և սկզբունքը մի նշանախեց անգամ փոփոխութեան չէ ենթարկուում։ Բոլորս էլ նոյն նպատակին—քաւութեան ենք դիմում, միայն զանազան ճանապարհներով և այստեղ ճանապարհը հետաքրքիր չէ այլ նպատակակէտը։

—Պէտք է մի առաջնորդող գրել «Մտքի» մէջ «Ժամանակ է վերջապէս կուսակցական նեղ ու գծուծ հաշիւներին վերջ դնելու վերնագրով.

—Եւ անպայման պէտք է յարձակուել մերոնց վրայ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

9/22 Ապրիլ Սպահան
ՎԵՐՋԱՊԷՍ *)

—

Անցաւ միքանի ամիս, և ռուսաց լեզուն մեր դպրոցներում աւանդելու մասին ոչ մի խօսք։ Հիւպատոսն իմ միջոցով հարցրեց Այվատեանից, թէ ե՞րբ է սկսուելու ռուսերէնի դասաւանդումը։ Թէ ինչ պատասխանեց Այվատեանը, այդ մի կողմ մնայ բայց փաստն այն է, որ ռուսերէնը մինչև այժմ էլ չի աւանդուում Ջուղայի դպրոցներում։ Հիւպատոսն այդ տեսաւ իհարկէ։ Եւ բանից դուրս է գալիս, որ ռուսաց հիւպատոս Բոգոեավլէնսկին, «մատնել» է Այվատեա-

*) Թիւ 6, Յունիսի տեսրը։ Սոյն յօդուածը նախորդ համարում պիտի լոյս տեսնէր, նիւթերի շատութեան պատճառով յետաձգուեց։

*) Տես «Միտք» № 14

նին հէնց իրան-Բոգոեավլէնսկիյին... իսկ Բոգոեավլէնսկին, Այվատեանի ասելով, իրանից ներկայացնում է Զուղան, որովհետև եկեղեցու սեղանից յայտարարեց, թէ «Ձեր առաջնորդին մատնեցին Զուղայից...» և այլն։ Գուցէ կարծում է Այվատեանը, թէ հիւպատոսի տեսնելը բաւական չէր, անպատճառ մի ուրիշն էլ պէտք է մատնէր, կամ, որպէս զի ինքը չմատնուէր, ես պէտք է իր ասածը հակառակ թարգմանէի, հիւպատոսին խաբէի թէ ռուսերէնը դասաւանդում եմ, կամ գուցէ Այվատեանը կարծում է, թէ Զուղայում կան մարդիկ, որոնք ռուսաց արքայի հետ գրագրութեան մէջ են, այդ գրագրութեան նիւթը «հրաչակաւոր» Այվատեանն է։ Ձո՛ւր կատաղութիւն և պրովակացիա եկեղեցու սեղանի վրայ. սրբեցէք ձեր բարկութեան փրփուրը, վարդապետ. դուք վաղուց մոռացուած էիք Զուղայում, ոչոք ձեզանով չէր հետաքրքրքրուում ձեր մրոտուելուց յետոյ։ Իսկ ռուսաց լեզուն մեր դպրոցներում չըմացնելու պատճառով ձեզ մատնելու կարիք չկար, որովհետև դուք անձամբ խաբեցիք ռուսաց կառավարութեան ներկայացուցչին. նա ինքն անձամբ ճանաչեց ձեզ։

Այվատեանը խոստացել է վերադառնալ մինչև երկու ամիս. բարի գալուստ։.. Արդեօք իր «ճարտարապետ» եղբօրը նորից քարշ կտայ յետևից... Զուղան ապրելու տեղ է, փնաս չունի... Բարի՞ ճանապարհ և բարի գալուստ...

(Շար. և վերջ)

Ա. Աքայանց

ՓՈՔՐԻԿ ՖԵԼԵՏՈՆ

Որտեղ որ լէշ է լինում՝ անգղներ են պտտւում, որտեղ քաղցր հիւթ է լինում՝ ճանճեր, իսկ որտեղ որ փող է լինում, ինչէք կարծում, ո՞վքեր են, պտտւում նրա գլխին... Հարցը ինքն բան ինքեան պարզ է և պատասխանը որոշ...—Դաշնակցականներ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի՞նչ ցաստեց Դաշնակցական խնամակալութիւնը մեր ազգի վրայ Կովկասում եւ Աստրպատականում.

ԹՈՂ ԽՕՍԵՆ ՓԱՍՏԵՐԸ

Հայութեան մէջ ամենքին յայտնի է, որ Ներսիսեան դպրոցը, գրեթէ, ամենաապահով և ամենահարուստ դպրոցն է մեզանում։ Երբ խլուեցան Կովկասում մեր ազգային—եկեղեցական կալուածներն ու նրանց դրամները, տիրեց այդ տեղերում ամենասոսկալի դրամական կրիզիս։

Սակայն և այդ աներևակայելի կրիզիսի ժամանակ՝ ժողովրդի իսկական և հարազատ ներկայացուցիչ-հոգաբարձուներն այնպէս ազնուօրէն, բարեխիղճ եւ ursացաւ կերպով կառավարեցին ազգի դպրոցները և մանաւանդ Ներսիսեանը, որ դրամական դէֆիցիտ չպատճառեցին այդ անդրամ դպրոցներին։

Անցան 1—2 տարիներ։ Կայսերական ողորմած մի մանիֆեստով յետ տրուեցան մեզնից խլուած կալուածներն ու նրանց դրամները։

Տեսնենք այժմ ինչպէս կառավարեցին Ներսիսեան դպրոցը «ժողովրդական շահերի» պաշտպանութիւնից անվերջ խօսող «սրտացաւ» և «ազգասէր» Դաշնակցականները, երբ դրամները ստացուած էին արդէն։

Խօսքը վերաբերում է այն շրջանին, երբ ամբողջ Ռուսական կայսրութեան մէջ փչել էր քաղաքական գարնանային մի հով։ Երբ գահոյքի բարձրութիւնից Մեծ Ռուսաստանի բազմամիլիոն ազգաբնակութեան սահմանադրութիւն և Դուման էր շնորհուել։ Երբ Կովկասում էլ դադարել էին հայ-թուրքական ընդհարումները և իր փառքի գագաթնակէտումն էր գտնւում դատարան, բանտ, շտաբ, կախաղան, հարկահաւանքներ, և հզօր միլիցիա, տեռորական ահեղասաստ գունդեր ունեցող և ամբողջ հայութիւնը պանիկայի մէջ պահող ամենազօր Դաշնակցութիւնը։

Ահա այդ օրերում և այդքան զօրաւոր Դաշնակցութիւնը իրեն ներելի միջոցներով գրահեց դէպի Ներսիսեան դպրոցը և տեղաւորեց այնտեղ իւր նշանակած հոգաբարձուներին։ Վերջիններն էլ քառապատկած ռոնիկներով ուսուցիչներ բերին «ընկերներից» և 1—2 տարուց յետոյ նոյն Ներսիսեան դպրոցի վրին, անխղճահար կերպով, հարիւր հազարի մի սոսկալի բաց, կորուստ կամ դէֆիցիտ դրին։

Այդ բալանի մասին գիտէին ամենքը։ Ակնարկներ էր անում և «Մշակը», բայց որովհետև դեռ տիրում էր Դաշնակցութեան տէոորի, մտրակի, բռունցքի և դաշոյնի սարսափը, այդ պատճառով դեռ շատ բան մնում էր ծածուկ։ Բռնութիւնը համայնատարած էր, Խաժակը իւր մասն էր սպառնօրէն թափ տալիս, հայ նեմեզիդաները աջ ու ձախ մատաղ և թանգագին հայ կեանքեր էին մանգաղում... Մի խօսքով ամբողջ արևելահայութեան գլխով սաւառնում էր Ա-տիլլայական մահու և սարսափի թագաւորութիւնը, որի երկաթեայ ճնշման ներքոյ ծանրածանր տնքում էր լեղապատառ հայութիւնը։ Անձի և խօսքի լիակատար Դաշնակցական «ազատութիւն»։

Ի բարեբաղդութիւն ստրկացուած հայ ժողովրդի, բռնաւորների վախճան եկաւ հասաւ հենց իրենց անխոհեմութեան երեսից։ Հայ կեանքը անձերի, բարոյական և նիւթական անփոխարինելի մեծ կորուստներից յետոյ... վերջը մտաւ նորմալ կացութեան մէջ։

Վերջապէս վրայ հասաւ 1911-ի Հոկտ. ամիսը։ Գումարուած է Թիֆլիզի թեմի պատգամաւորական ժողովը։ Քննւում է Ներսիսեան դպրոցի թալանի հաշիւը, որի 100000 ռուբլու բացը մատնանշում և խիստ կերպով դատապարտում են «Մշակականները»։ Բռնապետները զօռով լռեցնում են ժողովրդի ներկայացուցիչներին։

Խօսում է «իրենց» Լէօն։ Սակայն բռնաւորները նկատում են, որ սա ևս վարակուած է «Մշակականութեան» հակադաշնակցական ախտով, ուստի սրան ևս լռեցնում են, կրճատելով նրա ճառը, խօսքը, որ թագցուած մնայ 100,000 ռուբլու անխիղճ և անիրաւ թալանը։

Ինչ Դաշնակցականները չուզեցին և արգելեցին լսել թեմական ժողովում, այդ ասաց և ամբողջ ազգին լսելի դարձրեց Լէօն Թերթով։

1911 թ. Հոկտ. 15-ի համարով, «Կրճատեցին» վերնագրով և մի ազդու յօդուածով Լէօն ցոյց տուեց, որ մեր իրանց զաւակների մասին չմտածող ծնողներ, դիակներ, և այլն այլն...

Ղալայի հասարակութիւն, առաջիկայ կիւրակի օրը, հոգաբարձական ընտրութեան ժամանակ արդարացրու այն առածի իմաստը, որ ասում է՝

«Ուղտը որքան էլ մեռած լինի նրա,
կաշին մի իշաբեռ կլինի»։

Առաջին հոգաբարձական—խորհրդակցական ժողովում մեր «սրտացաւ» բարեկամները մի գլուխ բռռում էին՝

—Հաշիւ, հաշիւ, հոգաբարձութիւնը թող այս վայրկենին հաշիւ տայ, մենք չենք կարող համբերել։

Ինչքան էլ գանձապահ—հոգաբարձուն աշխատում էր լռեցնել այդ ձայները, բացատրելով՝ որ այս ապօրէն ժողովին հաշիւ չի տայ, և թէ մի քանի օրից յետոյ ակտ է լինելու, ուր արուելու են բարոյական և նիւթական հաշիւները, բարեհաճեցէք ներկայ գրտնուելու, հաշիւները տեսնելու համար։ Բայց ո՞ւմ ես ասում, հասկացողին մէկ ասա՝ անհասկացողին հա՛ կաց, հա՛ ասա՝։

Ակտի օրը մեր «սրտացաւ» բարեկամները փայլում էին իրենց բացակայութեամբ։ Բայց դեռ այս ոչինչ. ա. ժողովում մի պարոն խստագոյնս պահանջում էր հաշուի փակումը, ասելով որ՝ դրանից հետո բան չկայ մի քանի բոպէի գործ է, պէտք է մուտքը մի կողմ գրել, ելքը՝ միւս կողմ. տակը գիծ քաշել և հաշուեկշիռը պատրաստ է։...

Բայց երբ բ. ժողովում հարց եղաւ քննիչ յանձնաժողովի անդամներ ընտրելու համար և առաջարկուեց յիշեալ հաշուեգէտ պարոնին քննիչ յանձնաժողովի անդամ կարգել, պարոնը մերժեց, առարկելով որ հաշուապահութեան մասին գաղափար չունի...

Ահա թէ մեր հայ ազգը ո՞րպիսի մտալու մարդիկ է արտադրում երբեմն...

Այո՛, խօսել մի՞շտ կարելի է, բայց գործել... բան չունի՞ս...

Մի ուրիշ մտալու բան ևս.

Ուրիշ լուսաւոր աշխարհներում գոյութիւն ունի, ինչպէս գիտէք, սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւն։

Այստեղ էլ գոյութիւն ունի։ Բայց ինչ. հայոց ազգի աչքը լոյս, սատանան ինքն անգամ չի կարող որոշել թէ դա ինչ կուսակցութիւն է։ Տեղը եկած ժամանակ՝ թունդ հայ է, մի այլ ժամանակ ամօթ է համարում իրեն հայ համարել. երբեմն թունդ նացիոնալիստ է, երբեմն խիստ դեմոկրատ, երբեմն ազատների ոտերի փոշին լիզող, երբեմն հայհոյող նրանց. երբեմն շուն ու կատու Դ...երի հետ, երբեմն նրանց պոչի տակը մտնող...

Մի խօսքով ամեն ինչ, բացի կուսակցութիւն լինելուց. իսկակ ջահել-բազարութիւն...

Բայց մեզ համար մի բան մութ է դեռ ևս.

Արդեօք, ո՞վ է ո՞ւմ պոչի տակ մտել. ս. դ-երը Դ-երի, թէ դ-երը ս. դ-երի. կամ գուցէ երկուսը միասին մի այլ բանի տակ...

Տեսնենք, ո՞վ ո՞ւմ պէտք է լաւ խաբի։

Ուրիշ խօսքով՝ տեսնենք ո՞վ պիտի ստանայ առաջին մրցանակը։

Կեցցենք մենք. կեցցէ՛ մեր երիտասարդութիւնը. այո՛, բախտաւոր ենք. ,,ազգերնիս կառաջադիմէ կոր՛՛.

Ականջը խօսի Պարոնեանի, Պոլսի ջոջերի պատկերը լաւ է դուրս բերել, եթէ այստեղ լինէր, մեր ջահել-բազարի «տղորց» նկարագիրն լաւ էլ կտար...

Թամամ ջահել-բազարութիւն...

Ղալայի հասարակութեան աչքը լոյս, որ ջահել-բազարի տղերքն են նրա դպրոցական գործի ,,սրտացաւները՛՛

Ըստ կանոնագրութեան, ձայնի իրաւունք ունին միայն 21 տարին լրացած երիտասարդները։ Դրա դէմ ոչ ոք չէ կարող առարկել. այնպէս չէ՞. կարծում եմ ամենքը, ամեն աշխարհում կհամաձայնեն ինձ հետ։ Բայց արի՞ տես, որ ջահէլները դրա դէմ էլ են առարկում.

—Պ. Ա. Դուք անչափահաս էք, 21 տարեկան չկաք։

«փրկիչները» 100000 ր. անձեռնմխելի պատկառելի գումարը անիրաւօրէն ձեռնմխելի են դարձրել. քանդել են կտակ անողների կամքը և սնանկացրել դպրոցը։

Նոյն «ազգասէրների» այս անիրաւ թալանի մասին աւելի համարձակ գրեց «Մշակը» 1911 թուի 229 համարում։ Աւելի խիստ փաստեր գրուած մնացին պատգամ. ժողովի արձանագրութեան մէջ։

Այս նիւթի մասին յաւէտ անմոռանալի կենաց Սալմանի մի բանասիրականը (Մշակում), որ հայ երգիծական գրականութեան մէջ գլուխ գործոց կարող է համարուել։

Դրամական այս թալանից բացի պ. պ. Դաշնակցականները կրթեցին մի անզուսպ և խիստ անհամբերատար սերունդ, որի մասին աղեկտուր յօդուածներ ժամանակին տուեց պ. Առաքելեանը։

Նոյն Դաշնակցականները, որ բռնութեամբ գրաւել էին Մարիամեան և Յովհաննեան դպրոցները և տեսուչ կարգել Ռաշմաճեանին, երկու տարուայ մէջ վատնեցին 25,000 ր. մի պատկառելի գումար։ Իսկ թէ ինչ խայտառակ միջոցներով հեռացրին Լ. Սարգսեանին այդ դպրոցների տեսչութիւնից, այստեղ արդէն չարժէ խօսել, գիտեն այդ ամենքը։

Նոյն խնամակալները քանդեցին և քայքայեցին Ս. Էջմիածնի մեր թանկագին ճեմարանը՝ ապիկար Մագիստրոս վարդապետին տեսուչ կարգել տալով։ Սրա ըէժիմը կընորոշուի նրանով, եթէ միայն մատնանշենք, որ այս «սուրբ հայր» տեսչի օրով

—Ի՞նչ էք ասում. ես չափահաս եմ։

—Ինչպէ՞ս թէ չափահաս էք. ըստ չափաբերական մատեանի 19 տարեկան էք.

—Դա ի՞նչ նշանակութիւն ունի, թէպէտ ես 19 տարեկան եմ. բայց չափահաս եմ շատ-շատերից խելօք եմ։

—Դո՞ւք քանի տարեկան էք, պարո՛ն, դառնում է նախագահը Բ-ին.

—Ես քանի տարեկան լինելս չըգիտեմ, միայն թէ՝ ծնուածս օրից մինչև օրս չափահաս եմ.

—Չէ՞ որ ըստ չափաբերականի հազիւ թէ 18 տարեկան լինիք.

—Է՜հ, ո՞վ է նայում չափաբերականին. դա հին գաղափար է. նոր գաղափարով ով որ ման գալ և խօսել գիտէ՝ նա չափահաս է։

—Դուք 21 տարեկան չէք. ծխական չէք կարող համարուել, և բացի այդ՝ հայ եկեղեցուն էլ չեք պատկանում.

—Ճիշտ է, ես հայադաւան չեմ, հայ քահանան մեր տունը չէ գալիս, պտղի փող չեմ տալիս, բայց այնուամենայնիւ ես ծխական եմ և իրաւունք ունիմ ընտրելու և ընտրուելու։

Լաւ է որ ամենայն հայոց կաթուղիկոսի ընտրութիւնը տեղի ունեցաւ Էջմիածնում, թէ չէ այդպիսիները իրենց թեկնածութիւնն էլ կդնէին...

Բոշբողազութիւնն էլ էլ քաջութիւն է։

Այժմ անցնենք մեզալի միւս երեսին-Լիլաւայի հոգաբարձական ժողովին բայց այն էլ թողնենք եկող անգամուայ. միայն խնդրում եմ միտներդ պահեցէք այս առածը Լիլաւայի և լիլաւացիների վերաբերմամբ՝

«Քաչալը եթէ տեղ անող է
Թո՛ղ առաջ իր գլխին անի»

Լու

(Շարունակելի)

ԱՌԱՋԱՐԿ

Ղալա թաղի ծխականների Յունիս 10-ի հոգաբարձական ընտրութեան ընդհանուր ժողովին

Մի քանի պայմանների անորոշութիւնը և մեր թեմ. կանոնադրութեան թերի կողմերը միշտ դժուարութեան են մատնում Ղալայի ծխականներիս ընտրական գործը։ Եւ այդ անորոշութիւնից ու թերութիւնից օգտուել և օգտւում են միշտ անգործներն ու ընտրական ժողովների համար մարզուած և մշտապատրաստ մեր «տղերքը» և նոցա մայստեր (ուստա) օտարականները։

Առաջարկում ենք իր թաղային գործերի տէր ու տնօրէն և լիազօր ընդհանուր ժողովին վերջնականապէս վճռել և պարտադիր դարձնել, գո՛նէ, մեր թաղի համար հետևեալ կէտերը։

I. Մեր թեմ. կանոնադրութիւնը 6 լրիւ ամիս նոյն տեղում ապրող անձին իրաւունք է տալիս ընտրելու և ընտրուելու։

Այս կէտը անյարմար է և պատրաստի զէնք է ծառայել մեր գործերին տէր ու տնօրէն լինել ձգտող օտարականների և նրանց մատով շարժուող տեղացի անխոհեմների ձեռքում, որոնք 3-4 ամիս մեզանում հազիւ բնակուած օտարական և խպառ անծանօթ մարդուն բազմեցնում են մեր թեմական խորհրդում, թեմական ժողովում, որով յետ են մղւում տեղացիք կամ 10-20 տարիներից ի վեր մեզ հետ ապրող և արդէն տեղացի դարձած օտարականները։

Պետերբուրգի և Մոսկվայի հայերը, որ անսահման մեզանից աւելի զարգացած. կրթուած, հասկացող և արթուն մարդիկ են, հետևեալ կանոնադրութիւնն ունին։ Ով առ նուազն երկու տարի ապրել է այդ տեղերում, նա միայն կարող է ընտրելու իրաւունք ունենալ։ Շատ իմաստուն օրէնք է այդ և դրանով միայն կարելի է առաջն առնել երէկ կամ միւս օրը նոր հասած մարդկանց տիրապետութեան։

Ցանկալի էր ընդհ. ժողովը 6 ամսուայ վնասակար պայմանաժամը փոխէր երկու կամ երեք տարուայ։

II. Մեզանում կեանքն ու պաշտօնները այնպէս են դասաւորուած, որ բուն ծխականները, դըպրոցի համար 10-եակ թումաններ թօշակ վճարող ծնողները, յաճախ իրենց պաշտօնից չզրկուելու համար, ստիպուած են լինում բացակայել ժողովներից, որից օգտւում են թայֆայի կրթած և ժողովներ վազելու պատրաստ ջահիլները և շտապով մի երկու տասնեակ մարդկանցով ընտրութիւն անում։ Ծխականների ձայնն ու իրաւունքը չխեղդելու համար առաջիկայ ընդհ. ժողովը թո՛ղ մի անգամ ընդ միշտ որոշի և յաւիտեանս պարտադիր դարձնի, որ ով հնարաւորութիւն չունի ժողովի գալու, այնպիսին թող ուղարկէ իւր փակ և գրաւոր քուէն։ Այդ որ վճռուի, մեր տանու ջահէլների և օտարականների ախորժակը բաւական կսանձուի և դպրոցների ճակատագիրը կտնօրուի սիայն իսկական ծխականների գիտութեամբ ու քուէով և ոչ թէ երէկ Կովկասից կամ Տաճկաստանից այստեղ նոր հասածների քըմահաճոյքով։

Կանոնադրութեան այդ կէտը պէտքէ անպայման փոխել մեր այս շեշտած իմաստով։ Կանոնադրութիւնն է մեզ համար և ոչ մենք՝ կանոնադրութեան։ Ի՞նչ մեր կեանքին և մեր կարիքներին համապատասխան չէ, մանաւանդ վնասակար է, պէտք է այդ փոխել և յարմարեցնել մեր կեանքի և իրականութեան պահանջներին։

Պինդ պիտի պահել կանոնադրութեան 21 տարին արդէն լըրացածների օրէնքը և չշեղուել դրանից։

Առ այժմ այսքան։

Ա. Տ.-Վ.

7 Յունիս 1912 թ.
Թաւրիզ.

6-րդ դասարանի մի աշակերտ երկսեռ բազմութեան առաջ մերկ՝ քայլելով եկել լողացել էր Ներսիսեան լճում և նոյն ադամային մերկութեամբ՝ փառահեղութեամբ էլ նահանջ կատարել։

Գանք Թաւրիզ, մի կողմ թողնելով նրանց ձեռքով Սողոմ Գոմոր դարձրուած Սալմաստը։

Լիլաւի համար, մօտ 14 տարի առաջ, հոգաբարձու են ընտրւում հին մարդիկ.— պ. պ. Թադէոս Աֆթանդիլեան, հանգ. Բաղդ. Մել. Սարգսեան և ընկերներ.

Ժողովրդի այս հարազատ ներկայացուցիչները, առանց բռնութեան, առանց ծեծի և միաձայնութեամբ այս ընտրուածները իրենց նախորդներից իբր անձեռնմխելի և միակ գումար ստանում են 28 թմ. կամ 60 բուբլու մի խի՛ստ աննշան գումար։ Ի՞նչ արին այս հին և մեր չհաւանած մարդիկ։

—Նոքա իրենց պաշտօնավարութեան ընթացքում, սրան նրան դիմելով և նպաստ ստանալով՝ շինեցին պալատանման մի դըպրոց, որ այնքան անշուք է ներքուստ իւր ուսումնական և անկրօնական յոռի բովանդակութեամբ։ 28թուման ողորմելի գումարը, ի պատիւ իրենց, նոքա հասցրին 11 հազար թումանի մի խոշո՛ր գումարի։ Ապա պ. Թադէոսը 1000 թմ. էլ առանձի, ո՛չ, կարծեօք, պ. Ասատրից առնելով տուեց տոկոսով շահուէ

Եկան նորերը։ Եկան կարմիր «ազգասէրները»։ Չհաւանեցին այս հներին, անուսումներին և աղաներին։ Խլեցին դպրոցը աւելի լաւ խնամակալելու համար։ Եւ խընամակալեցին ամենայն ազգասիրութեամբ։

Այդ «ազգասէրները», փայտով, դաշունով ու ատրճանակով *) մօտ 10 տարի ընտրել տուին իրենց մարդոց, կլանեցին անուսների կող. առ կող. դիզած 12 հազար փողերը և այսօր ողբալի սնանկութեան հասցրին ժողովրդի դպրոցները Լիլաւայում։

Պարոնա՛յք «փրկիչնե՛ր», ժողովրդի մարդիկ ձեզ տուին փառահեղ դպրոց, 12 հազար թումանի խոշոր գումար, ի՞նչ էք տալիս դուք ձեր յետնորդներին։

Պատասխան տուէք «աշխատաւորութեան և հայ ազգի միակ պաշտպան ու մարտական կազմակերպութեան» պարագլուխներ, համկիրներ և երդուեալ պաշտպաններ։

Թաւրիզի ժողովուրդ, մենք շարեցինք միայն փաստեր, թւով համարով և այն էլ հազարից մէկը։

Ահա վերոյիշեալ բոլոր թալանչիների տեղիս ջահիլ ընկերները, նկատելով որ 1-2 հազար թուման փող կայ Ղալայում, յուսահատական կռիւ են մղում և ձեր դպրոցներից փային նստելու։

Կվստահանա՛ք դուք նրանց։ Կուզենա՛ք Ղալան ես այդ յայտնի խնամակալների, կըրօն, հոգևոր իշխանութիւն, ժողովրդական իշխանութիւն և ո՛չ մի պատասխանատւութիւն չճանաչողների այդ բռնաբարունցք բանակի ձեռքը յանձնել։

Փրկեցէք ձեր լուսոյ տաճարը այդ անվստահելիներից և կործանարարներից քանի ուշ չէ։

Ղալայի ծնող ծխականներ և սրտացաւ իրաւասուներ, ահա թէ ինչպիսի «ազնիւ», «անկաշառ» և «սրտացաւ ազգասէր» երիտասարդներ են մօտենում Ղալային։։

Եկէք ընտրական ժողովի, եկէք ամէնքդ և եկէք աներկիւղ, համարձակ, առանց քաշուելու նորանցից, որոնց զէնքը եղել է չքաշուելը, աղաղակը և պատուաւոր մարդկանց անպատուելով փախցնելը և նրանց զզուեցնելը։

Եկէք բազմաթիւ տասնեակներով, նայեցէք այդ թալանչիների համախոհներին, կուսակցապէս դաստիարակուած և «հասարակական շահերի» անունից խօսող ջահիլներին և ասացէք։

Մենք տեսանք ձեր «ազգաշէն» գործունէութիւնը Ներսիսեան դպրոցում, տեսանք ձեր աւերակները Լիլաւայում, էլ կշտացած ենք ձեզանից և ձեր տուած ուսումից։ Հեռու Ղալայից, ձեր անմաքուր ձեռքերով, ձեր մանուկ ու մուրացածոյ թեկնածուներով։

Ա. Տ.-Վ.

*) Յիշել փայտոնչի Բագրատին և Ղալայի վարժապետ Սաղաթելի ծեծելը։

ՊՕՍՏԱՐԿՂ

Թաւրիզ Պ. Միզառօյին. — Ձեր «Արջք օրհասականք ընդ վախճանել չնչոյն հզօրագոյնս կուէին» այժմէական յօդուածի տպումը նիւթերի շատութեան պատճառով յետաձգուեց։

Թաւրիզի մեր բաժանորդներին որոնք ապառիկ ունեն.-պարոններ, չորս ամիսը լրանալու վրայ է և դեռ 14 ղռանի չնչին գումարի աննշան բաժանորդագինը դուք չէք վճարել։ 100 տարի է մեր մէջ մամուլ գոյութիւն ունի և գիտէք որ բաժնեգինը կանխիկ է վճարւում։ Որքա՛ն սպասենք և քանի՛ անգամ գանձողին ուղարկենք դրամի և էլի լսենք ձեր պատասխանը. «վաղը եկէք» կամ «յետոյ կուղարկենք»։ Մեզնից թղթավաճառ, տպարանատէր, ցրիչ, փոստ և այլն կանխիկ և առանց ժամանակ տալու առնում են, մենք էլ ոչ ապահով վաճառական ենք և ոչ էլ դրամատէր, մենք սպասում ենք ձեր չնչին բաժնեգներին։ Պարտաճանաչութիւնը ազնիւ բան է։ Նոյնը ասում ենք և մեր օտար քաղաքների պ.պ. բաժանորդներին, որոնց դրամները վաղուց և հրամայաբար օր առաջ արդէն մեզ հասած պիտի լինէին։

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՆ ԵՆ

Մարաղում պ. Յ. Տր. Վարդանեանը
Ուրմիում « Ա. Միրզաջանեանը
Աստառում « Ա. Բժշկեանը
Ռէշտում « Մ. Պատմագրեանը
Էնզէլիում « Բ. Մկրտչեանը
Ղազւինում « Ա. Տ. Յակոբեան
Թէհրանում « Պ. Միքայէլեանը
Սպահանում « Ն. Դաւթեանը։

Խնդրում ենք մեր բաժանորդներին շտապեն իրենց բաժնեգները յանձնել վերոյիշեալներին, բոպէ առաջ մեզ հասցնելու համար։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոյն համարը բաղկացած է մի համար և կիսից, կամ՝ 6 երեսից, ունի № 2 յաւելուածը, որը լոյս կտեսնի յաջորդ օրը առաւօտեան շուտ։ Լուրերը, յայտարարութիւններն ու պօստարկղը կլինին յաւելուած թերթի վրայ։

խմբ.

ԹԱՒՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Վերսկսուել է երթեկ և գիշերօթիկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր առ. ժ. 10—12։

Այն աղքատները, որոնք պ. Բայլարբէգուց վկայական կունենան, կը բժշկուին ձրի։

Հիւանդանոցի կառավարիչ բժիշկ

Վահան Գէորգեան

Խմբագիր—հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց